

Հույս Հայաստանին (Acts 13 քրիստոնեական ծառայությունների հետ գործակցող մի ծառայություն է) նվիրված է իրականացնելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատվիրանը՝ տարածելու Ավետարանը ամբողջ աշխարհում գտնվող հայախոս ժողովրդի մեջ:

Այս ծառայության ծնունդը բազում աղոթքների, Տիրոջ առջև երկունքի ցավերի և ծառայության հիմնադրի՝ Ֆրեդ Սալեհի, երկար տարիների նվիրվածության, անդադար փնտրտուքի, և Աստծո ողջ խորհուրդը, առանց որևէ խեղաթյուրումների, սովորեցնելու արդյունքն է:

Ցավոք, քսաներորդ դարի եկեղեցին տարիներ շարունակ խեղաթյուրել է իր գաղափարախոսությունը և գործունեությունը՝ սրբերին ճշմարիտ, հաղթական կյանքի համար պատրաստելու Աստծո ողջ խորհուրդը: Դա առավելապես արտահայտվում է այն բանում, որ Քրիստոսի գալուստը դարձել է շահի աղբյուր, և քրիստոնեությունը դարձել է հեռուստատեսային քրիստոնեություն (Մարդիկ եկեղեցի չեն հաճախում և միայն հեռուստատեսային քարոզներով են բավարարվում): Սա վտանգավոր անհոգություն է, այս կարևոր հարցում, որը կարող է պատճառ դառնալ, որ սրբերը չթագավորեն Քրիստոսի գալիք թագավորության մեջ:

Եկեղեցին հեռացել է թագավորության ավետարանը քարոզելուց և ընկել է, դժոխքից երկինք գնալու մակերեսային քարոզչության ծուղակը՝ այն անվանելով Բարի Լուր: Աստծո զավակներից շատերը մնացել են խավարի մեջ և կորցրել իրենց ճշմարիտ կոչումը, դա է պատճառը, որ չեն աճում իրենց քրիստոնեական կյանքում:

Հույս Հայաստանին նվիրվել է այդ արթնության և նորոգման գործին՝ հասցնելու Աստծո Խոսքի հավիտենական և ծածկված գանձերը իր այն բոլոր սիրելի զավակներին, ովքեր ճշմարտապես փափագում են Տիրոջը խորությամբ ճանաչել և ավելի հստակ գաղափար կազմել Հայր Աստծո ծրագրի և նպատակի մասին՝ Քրիստոսի Հարսի համար:

Այս անհանգստությունն է պատճառը, որ ստեղծել ենք այս ցանցը՝ որպես գործունեության հիմք, որ ապահովենք համապատասխան միջոցներով նրանց, ովքեր ջանասիրաբար փափագում են Աստծո ողջ խորհուրդը:

Մեր Հավատքը

Աստվածաշունչը ամբողջությամբ իշխում է Act 13 քրիստոնեական ծառայության հավատքի և գործունեության վրա: Հավատքի այս հայտարարությունը, որ Act 13 քրիստոնեական ծառայությունը միանում է ունի մեկ նպատակ. պարզաբանել մեր հավատքը բոլոր նրանց, ովքեր ընդգրկված են ծառայությունների մեջ և որոնց հետ փոխադարձ հարաբերությունների մեջ ենք, որպեսզի բոլորս նույն բանը խոսենք (1Կոր. 1:10, Գործք 2:42): Այս հայտարարությունը ոգևորելու կամ դատապարտելու համար չէ, այլ ճշմարտությունը վեր հանելու, որը կարևոր է մեր կենդանի հավատքի համար: Մենք չենք ասում, որ այն բովանդակում է աստվածաշնչյան ողջ ճշմարտությունը, այլ միայն հիմնական վարդապետությունները, որոնք բավարարում են մեր կարիքը:

1. Մենք հավատում ենք, որ Աստվածաշնչի 66 գրքերը, որոնք բովանդակում են Հին և Նոր Կտակարանները, Աստծո Խոսքն է: Այն գրված է Աստծո Սուրբ Հոգով ներշնչված, և ներշնչումը լոկ գաղափար չէ, այլ Աստծուց մարդուն տրված բավարար և կատարյալ հայտնություն: Ուստի մենք հույս ենք դնում Սուրբ գրքի վրա, որպես մեր

վարդապետության, հավատքի և գործունեության հիմք: Դրանք են մեր հիմնաքարերը:

- II. Մենք հավատում ենք միասնական Աստվածությանը և Երրորդությանը՝ Զորը, Որդուն և Սուրբ Զոգուն:
- III. Մենք հավատում ենք, որ Զիսուս Քրիստոսը Աստված է՝ մարմնով եկած: Նա ծնվեց Սուրբ Զոգուց հղիացած կույսից:
- IV. Մենք հավատում ենք, որ երբ Տեր Զիսուսը խաչվեց և մահացավ, չնայած Նրա խաչելությունը մարդու կողմից էր, (և Աստծո նախասահմանությունով էր) բայց Նրա մահը ավելի խորը խորհուրդ ունեցավ, որովհետև Նա գիտակցաբար և կամովի դրեց Իր կյանքը և այն ուներ եռակի կարևորություն, այսինքն՝
 1. Նա, որ մեղք չէր ճանաչում, մեր փոխարեն մեղք դարձավ և կրեց ամեն դատապարտություն և մեղքի պատիժ, որ մարդը կարողանա արդարանալ և թողություն ստանալ հավատքով՝ այդ քավչարար մահով: Այս քավչարար մահը չնդունելու դեպքում՝ մարդը հավիտենական կորուստ է կրում:
 2. Քրիստոսի մահը Աստծո աչքով և մտքով ներկայանում է, որպես ողջ մարդկային ցեղի մահը Ադամի մեջ: Մենք այսպես ենք հասկանում, որ եթե մեկը մեռնում է բոլորի փոխարեն, ուրեմն բոլորը մեռնում են (Նրա մեջ): Այսպիսով, միակ հիմքը, որի վրա կարող է որևէ հարաբերություն սկսվել Աստծո հետ, նոր ծնունդն է վերից՝ Սուրբ Զոգով:
 3. Նա հաղթեց ինչպես մեղքին և մարմնին, այնպես էլ Սատանայի բոլոր զորություններին: Գողգոթայի խաչը սատանայական ողջ գերիշխանության վերջնական տապալումն է՝ ապահովելով հաղթանակ հավատացյալի կյանքում, իշխանություն եկեղեցու համար և որոշված ժամանակահատվածում այդ գերիշխանության վերջնական կործանումը:
- V. Մենք հավատում ենք Տեր Զիսուսի մարմնավոր հարությանը: Իր հարությունից հետո Նա մարմնով հայտնվեց՝ բազում ապացույցներով ցույց տալով Իրեն:
- VI. Մենք հավատում ենք, որ Նա նորից կգա նույն մարմնով, նույն ձևով, ինչպես որ համբարձվեց: Մենք հավատում ենք, որ այս գալուստը կլինի հազարամյակի սկիզբ:
- VII. Մենք հավատում ենք, որ, ըստ Աստծու Խոսքի, եկեղեցին կազմված է Մենք հավատում ենք , որ այն, ինչ սովորաբար կոչվում է օրենք իսկապես
- VIII. Մենք հավատում ենք, որ օրենքները սովորաբար կոչվում են.
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ինչ վերաբերվում է վերը նշված վկայություններին, չենք կարծում, որ պետք է պրոպագանդել դրանք որպես ուսուցման համակարգ կամ կուրորեն հնազանդվել բոլորին, այլ տալ դրանց համապատասխան նշանակություն և կատարել այն՝ որպես Սուրբ Զոգով լուսավորված և Տիրոջով առաջնորդվող ժողովուրդ: Զոգին կառաջնորդի բոլոր պարագաներում, և մեր պարտականությունն է Խոսքը մեկնել այնպես, ինչպես Նա կառաջնորդի: